Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Նորակերտ
համայնքի 2017 թվականի
հունվարի 14-ի N2-Ն որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021թթ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար՝ Շ. Կարապետյան
Նորակերտ 2016թ.

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր

1.Ներածություն

Սույն մեթոդաբանությունը սահմանում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի (ՀՀԶԾ, Ծրագիր) մշակման և կառավարման հիմնական սկզբունքները, գործիքակազմը, գործընթացը և նպատակաուղղված է համայնքի կայուն զարգացումն ապահովող չափելի արդյունքների սահմանմանը և միջոցառումների նախանշմանը:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

ՀՀԶԾ-ում ներառվում են համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները: Միջոցառումները պետք է հստակ նկարագրված լինեն, իսկ նախատեսված արդյունքները՝ չափելի: Դրանց իրականացումը պետք է շարունակաբար մոնիթորինգի ենթարկվի, որպեսզի սահմանված թիրախներից շեղումների դեպքում հնարավոր լինի քայլեր ձեռնարկել միջոցառումներ պլանավորված հուն վերադրածնելու նպատակով: ՀՀԶԾ շրջանակներում իրականացված յուրաքանչյուր միջոցառում պետք է գնահատվի, որպեսզի բացահայտվեն թիրախային արդյունքներից հնարավոր շեղումների պատճառները, մշակվեն միջոցառումների իրականացման ավելի արդյունավետ իրականացման այլընտրանքային տարբերակներ և հետագայի համար դասեր քաղվեն:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը: Հնգամյա զարգացման ծրագրի մշակումը լուրջ աշխատանք է, որի կազմակերպմանը անհրաժեշտ է մոտենալ ամենայն պատասխանատվությամբ, կարևոր խնդիրներ են ծրագրի մշակման մեթոդական ցուցումների ապահովումը, ծրագրի առանձին բաժինների մշակման ժամանակացույցի սահմանումն ըստ կատարողների, ծրագրերի մշակման մեջ ներգրավված աշխատակիցների հրահանգավորումը, ծրագրի նախագծի ամփոփումն ու ավագանուն ներկայացնելը:

1.Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

Ողջունում եմ Ձեզ Հայաստանի Հանրապետության Արամավիրի մարզի Նորակերտ համայնքի բնակիչներին, ավագանուն, համայնքապետարանի աշխատակազմին:

Շնորհակալություն եմ հայտնում հնգամյա զարգացման ծրագրի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների

բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

Նորակերտ համայնքի զարգացման հնգամյա ծրագրերի կազմումը և կատարումը գերակա խնդիր է մեր համայնքի, նրա ենթակայության կազմակերպությունների,միջնակարգ դպրոցի բուժ ամբուլատորիայի, ինչպես նաև առևտրի և սպասարկման օբյեկտների համար: Համայնքում 2017-21թթ նախատեսվում է կատարել մի՝ շարք կարևոր աշխատանքներ՝ դրանք են. համայնքի «խոպան» կոչվող տեղամասում ոռոգման ինքնահոս ջրագծի անցկացում, դպրոցի մարզադահլիճի կառուցում, ֆուտբոլի դաշտի բարեկարգում, ներհամայնքային փողոցների բարեկարգում, ոռոգման ներտնտեսային ցանցի նորոգում: Խիստ կարևորություն եմ տալիս գիտելիքներով զինված, համակողմանի և ներդաշնակ զարգացած սերնդի ձևավորմանը: Կցանկանամ, որ այս գիտակցումով առաջնորդվի յուրաքանչյուրը, մանկապարտեզ- դպրոցի մակարդակներով, քանզի մատաղ սերնդին է վստահված մեր ապագան՝ մեր վաղվա պետական, քաղաքական, մշակութային և հասարակական գործիչներին, կրթելու և հայեցի դաստիարակելու խնդիրը: Անհրաժեշտ է ապահովել այն գիտակցումը, որ այդ գիտելիքները պետք է ծառայեն ինչպես իրենց անձնական բարօրությանը, այնպես էլ ազգի ու հայրենիքի հզորացմանը:

Ծրագրի մշակման, քննարկման ու հաստատման աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերել ավագանու, համայնքապետարանի, դպրոցի, մանկապարտեզի, մշակույթի տան, փոստի, բուժ ամբուլատորիայի և համայնքի վարչական տարածքում գործող հիմնարկ ձեռնարկությունների աշխատակազմերը ու անհատ քաղաքացիները: Նշեմ նաև, որ բացի ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումից համայնքապետարանը կարգավորում է տավա ընթացքում ստեղծված խնդիրները՝ առաջնահերթության կարգով:

Շնորհակալություն:

1. *Համայնքի իրավիճակի նկարագրություն*

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքը գտնվում է մարզի հյուսիս–արևելյան մասում, ծովի մակերևույթից 930.0մ բարձրության վրա, նախալեռնային գոտի է, գտնվում է Ուռց-Կոտայք-Շամիրամ գոտում, մարզկենտրոնից հեռավորությունը 32կմ է: Գյուղի կլիման ձմռանը ցուրտ է, ամռանը շոգ, հաճախ դիտվում է երաշտ և ցրտահարություն:

Համայնքն ունի 695 ընտանիք, 1366.88հա հողատարածք, համայնքը 70 տարեկան է:

Ժողովրդագրություն

Համայնքն ունի 3214 բնակիչ, այդ թվում՝

h/h	Տեղեկատվություն	մարդ
1	Տղամարդիկ	1646
	Այդ թվում տղամարդիկ կազմում են բնակչության %	51.2
2	Կանայք	1568
	Այդ թվում տղամարդիկ կազմում են բնակչության %	48.8
3	Թոշակառուներ	316
4	Փախստականներ	18
5	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	6
6	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	-
7	Հաշմանդամներ	52
8	Ընտանեական նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	52
9	Զոհվածների ընտանիքներ	3
10	Աշխատունակ բնակչության թիվը	1916
11	Աշխատանք ունեցողների թիվը	518

12	Գործազուրկներ	85
13	Գրանցված ընտրողների թիվը	2285
14	Ընտանիքների (ծխերի) թիվը	604

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 62.43հազ.քմ, 4 բազմաբնակարանանոց բնակելի տներ, 472-ը առանձնատներ են՝ 58.93 հազ.քմ մակերեսով: Համայնքում կան 32 կիսակառույց առանձնատներ: Համայնքում կան բնակարանների կարիքավոր ընտանիքներ, որոնց քանակը տարեցտարի աճում է, բազմաթիվ երիտասարդ ընտանիքներ ունեն տնամերձ հողամասեր, սակայն տնտեսական սուղ պայմանների պատճառով չեն կարող կառուցել առանձնատներ:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Համայնքում իրականացվել է հողի սեփականաշնորհման գործընթաց.

հ/հ	Տարածքի անվանումը	Տարածքի չափը/հա/
1	Համայնքի հողային տարածքը	1366.88
2	Գյուղատնտեսության հողեր	1134.99
3	Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	41.31
4	էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների համար	1.42
5	Հատուկ պահպանվող տարածքներ/ այդ թվում պատմական և մշակութային հողեր	5.2
6	Հատուկ նշանակության հողեր	---
7	Ջրային տարածք	15.03
8	Բնակավայրի տարածք	168.93

Համայնքի ընդհանուր նկարագրություն

Արմավիրի մարզի Նորակերտ համայնքը հիմնադրվել է 1946 թվականին: Սկզբնական շրջանում այն ձևավորվել է որպես միացյալ կոլտնտեսություն հարևան Բաղրամյանի անվան տնտեսության հետ համատեղ, այնուհետև առանձնացել և կազմավորվել է որպես խորտնտեսություն՝ մասնագիտացված այգեգործական ուղղությամբ՝ զուգակցված պտղաբուծության և անասնապահության հետ: Տնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում խաղողագործությունից ստացված եկամուտների տեսակարար կշիռը կազմել է 85.0-93.0%: Նորակերտի խորտնտեսությունը եղել է նախկին էջմիածնի շրջանի զարգացած առաջավոր խաղողագործական տնտեսություններից մեկը: Տնտեսության ղռապարային քարքարոտ հողակտորների վրա աճեցված խաղողը աչքի էր ընկնում բարձր որակական ցուցանիշներով՝ խաղողի շաքարայնությունը կազմում էր 24.0-27.0%: Ցավոք սեփականաշնորհումից հետո տարբեր օբյեկտիվ և սուբեկտիվ գործոնների ազդեցության պայմաններում քանդվեցին խաղողի այգիները, որոնք դրվեցին հիմնականում հացահատիկային մշակաբույսերի մշակության տակ, որը ցածր բերքատվության պայմաններում ձեռնատու չէր և ներկայումս ոչ մի հեկտար ցորեն չի ցանվում և չմշակվող հողերի տեսակարար կշիռը համայնքում կազմում 85-90 %:

Նորակերտ նշանակում է նոր կերտված, ինչպես արդեն նշեցինք այն հիմնվելով 1946թ. հետագայում ընդարձակվեց և վերածվեց ծաղկուն բնակավայրի: Նորակերտի առաջին բնակիչները եղել են սկզբում մերձավոր արևելքի երկրներից հայրենադարձված մեր հայրենակիցները /Սիրիա, Իրաք, Իրան/ այնուհետև Կոտայքի շրջանի Աստղաբերդ գյուղից վերաբնակեցվել են այդ գյուղի բնակիչները: Հետագայում վերաբնակեցման կարգով

համայնքում բնակություն են հաստատել հանրապետության տարբեր շրջաններից և հարևան Վրաստանի /Ախալքալաք/ և Ադրբեջանից վերաբնակեցված մեր հայրենակիցները: Այնպես որ բնակչության կազմը միատարր չի՝ կան նաև եզդիներ:

Համայնքը ունի հիանալի տիպային կուլտուրայի տուն, գրադարան, երկհարկանի դպրոց՝ առանց սպորտ դահլիճի, համայնքապետարան, մանկապարտեզ, փոստ, բուժական ամբուլատորիա: Դպրոցն ունի 317 աշակերտ, մանկապարտեզը՝ երկու խումբ, 60 սան, կուլտուրայի տանը գործում են պարային և թատերական խմբեր:

Վերանորոգված և կահավորված է կուլտուրայի տունը, բուժական ամբուլատորիան, համայնքապետարանը, մանկապարտեզը, որտեղ անցկացված է լոկալ ջեռուցում:

Ի դեպ մանկապարտեզը 2015թ. հիմնանորոգվել է կառավարության կողմից հատկացված շուրջ 41.0մլն ՀՀ դրամ գումարով՝ սակայն աշխատանքները թերի են մնացել, քանի որ հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքներում չեն ներառվել մոտ 11,5 մլն դրամի աշխատանքներ, որը խոստացել են լրացուցիչ հատկացնել, այդ պատճառով մանկապարտեզը դեռևս չի գործում:

Համայնքի վարչական տարածքում գործում են մի շարք հիմնարկ ձեռնարկություններ՝ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ, «Կամրջաշինական և երկաթ բետոնե կոնստրուկցիաներ» ՓԲԸ, «Բարբոս» ՍՊԸ, «Բեկոր» ՍՊԸ և տասնյակ անհատ ձեռներեցներ, որոնք կազմակերպում են արտադրություն և առևտուր:

Համայնքը իր վարչական տարածքով սահմանակից է Արմավիրի մարզի Բաղրամյան, Վաղարշապատ և Շահումյանի բանավան, Արագածոտնի մարզի Սասունիկ համայնքների հողատարածքներին: Երթուղային 205 համարի միկրոավտոբուսը համայնքը կապում է անմիջականորեն Երևան քաղաքի հետ: Ներհամայնքային ճանապարհները ասֆալտապատվել կամ ամբողջովին /նաև մասնակի փոսալցումներ/ հիմնանորոգվել են 2014-2015թթ ընթացքում, դա շարունակական գործընթաց է, որը ֆինանսական միջոցների առկայության դեպքում անընդհատ կատարվելու է:

Համայնքը գազաֆիկացված է, այս պահի դրությամբ ունենք 465 գազ սպառող , կառուցվել է երկու գազամատակարարման կայան /ԳՐՊ/:

2015թ Ասիական զարգացման բանկի ծրագրի շրջանակներում ամբողջովին փոխվել է համայնքի խմելու ջրի ջրագծերը, որի շնորհիվ համայնքի ազգաբնակչությունը ներկա դրությամբ ապահովված է շուրջօրյա ջրամատակարարումով:

2016 թվականին համայնքի միջոցներով լիովին հիմնանորոգվել է մշակույթի տունը, որի համար ներդրվել է մոտ 37.0 մլն ՀՀ դրամ, հիմնանորոգվել է գյուղապետարանի շենքը, որի համար ներդրվել է շուրջ 4.0 մլն ՀՀ դրամ:

2010թ ,Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ–Հայաստանե ծրագրի շրջանակներում կազմակերպվում է «Ջրից դեպի շուկա» դասընթացներ:

Նորակերտ համայնքում սկսած 1991թ-ից, կատարվել է նոր հողհատկացումներ՝ 170 ընտանիքներ ստացել են տնամերձ հողամասեր: Նորաստեղծ թաղամասում անցկացվել է խմելու ջրի ջրագծեր, ոռոգման առուներ, գազաֆիկացվում է նորակառույց առանձնատները, տեղադրվել է երկաթ-բետոնյա էլեկտրասյուներ, կառուցվել է մեկ նոր ենթակայան:

Համայնքի բազմաբնակարանանոց շենքերում անցկացվել է լոկալ կոյուղի և ջեռուցում բնակչության միջոցներով

Համայնքը շարունակում է կառուցապատվել գլխավոր հատակագծի շրջանակներում:

2.1 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

Համայնքի 2016թ բյուջեի եկամուտների և ծախսերի մասին տեղեկություններ
ա/ եկամուտներ

	Եկամուտների տեսակները	Տարեկան	
		պլան	Կատ-ող
1	Հողի հարկ	3690.0	4123.0
2	Գույքահարկ	7810.0	8357.6
3	Տեղական տուրք	453.0	588.1
4	Տեղական վճար	-----	------
5	Հողի վարձակալության վճար	44.8	46.7
6	Համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ գումարներ	612.5	612.5
7	Վարչական իրավախախտումների պատժամիջոցներից եկամուտներ	10.0	-------
8	ՀՀ պետական բյուջեից դոտացիա	53345.8	53345.8
9	ՀՀ պետական բյուջեից համայնքի բյոջեին տրամադրվող այլ դոտացիա	77.2	77.2
10	Տարեսկզբի ազատ մնացորդ	43391.4	43391.4
11	Հողի օտարումից եկամուտ	-------	122.0
	Ընդամենը	109434.7	110664.3

բ/ ծախսեր

h/h	Հիմնարկներ	Տարեկան	
		պլան	Կատ-ող.
1	Օրենսդիր և գործադիր մարմիններ	39262.0	38287.3
2	Մշակույթի տներ, ակումբներ	4100.0	4018.1
3	Սոցիալական պաշտպանություն	7577.5	7556.0
4	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	2405.0	2304.2
5	Նախադպրոցական կրթություն	4703.0	4614.1
6	Մշակույթ,սպորտ,կրոն	2962.0	2960.0
7	Աղբահանում	1500.0	1500.0
8	Տնտեսական հարաբերություններ	1203.0	1201.0
9	Փողոցների լուսավորում	745.0	731.3
11	Առողջապահություն՝սուբսիդիա	30.0	30.0
12	Տրանսպորտային միջոցների ծ/բ	9418.0	9416.0
13.	Նախագծային ծախսեր	2820.0	1135.0
14.	Վարչական սարքավորումներ	5058.0	4887.6
15.	Աճեցվող ակտիվներ	134.0	134.0
16	Կապիտալ նորոգումների ծախսեր	27508.4	26870.1
	Ընդամենը	109425.9	105644.7

Նորակերտ համայնքում օգտակար հանածո է համարվում ուղիղ կտրվածքի տուֆ քարը, որը արդյունահանվել է 1991-2013թթ.: Քարի արդյունահանումը ամբողջովին դադարեցված է քանի որ այն ձեռնտու չեր արդյունահանման շերտի անբավարար քանակի և քարի փխրուն լինելու պատճառով:

hh	Հասցե	Շահագործող կազմակեր-պության անվանումը	Արտադրանքի տեսակը	Արտադրության ծավալը /տարեկան/	Գործո է
1.	Նորակերտ	Ավտոճանապարհային մեքենաներ ՓԲԸ	Ճանապարհների ասֆալտապատում	———	այո
2.	Նորակերտ	Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան ՓԲԸ	Ծառայությունների մատուցում		այո

3.	Նորակերտ	Էջմիածնի ԿՇՃ ՓԲԸ	Ծառայությունների մատուցում	Ըստ պահանջի	այո
4.	Նորակերտ	Բեկոր ՓԲԸ	Տարբեր գործունեություններ	Կախված առաջարկից	այո
5.	Նորակերտ	Բարբոս ՍՊԸ	Սնանկ է ճանաչված	_____	ոչ
6.	Նորակերտ	ԱՁ. Վանուշ Ասատրյան	Սալիկի արտադրամաս	2500	այո
7.	Նորակերտ	Ա Ձ Բագրատ Ասատրյան	Սալիկի, սյունների, խոյակների պատրաստում,փայլեցում/պալիրովկա/	Կախված է պատվերի առկայությունց	այո

Համայնքում զբոսաշրջության հետաքրքրություն ներկայացնող բնական պատմական և մշակութային հուշարձաններ չկան, Նորակերտ համայնքում առկա են դամբարանադաշտեր որոնք գրանցված են հուշարձանների պահպանության Հայաստանյան մատյաններում և թվագրված է մ.թ.ա.2-1 հազարամյակ: Համայնքում հնարավորություն կա ներդնելու ագրոտուրիզմը՝ զուգակցված պատմամշակութային հետաքրքրություն ներկայացնող զբոսաշրջային երթուղիների ներդրման հետ, քանի որ համայնքը գտնվելով երեք հինավուրց քաղաքների /Երևան, Վաղարշապատ, Աշտարակ/ կենտրոնում ընձեռում է այդ հնարավորությունը:

Համայնքն ունի մեկ միջնակարգ դպրոց, երկհարկանի շենք՝ վերանորոգված, ունի 317 աշակերտ, նախատեսված է 350 աշակերտի համար, ուսուցչական կոլեկտիվը բաղկացած 27 հոգուց, տեխնիկական անձնակազմը բաղկացած է 12 հոգուց:

Համանքն ունի մեկ մանկապարտեզ՝ նախատտեսնված 100 սանի համար, կոլեկտիվը բաղկացած է 15 հոգուց: Ներկայումս մանկապարտեզը չի գործում, քանի որ գտնվում է հիմնանորոգման պրոցեսում: Ի դեպ հիմնանորոգման աշխատանքները ձգձգվում են, քանի որ նախատեսնված գումարը չի բավարարել այն ավարտին հասցնելու համար; Հիմնանորոգման աշխատանքները ավարտին հասցնելու համար պահանջվում է ևս 11.5 մլն դրամ, խնդրի մասին տեղյակ են վերադաս ատյանները: Համայքում գործում է մեկ բուժական ամբուլատորիա, նախատեսված է 25-30 մարդու սպասարկման համար: Կոլեկտիվը բաղկացած է 7 հոգուց:

Համայնքում ընտանեական նպաստների համակարգում գրանցված են 52 մարդ:

Նորակերտը ունի մտավորականության տարբեր շերտեր՝ մասնագիտություններ, համայնքում աշխատուժի միայն 35%-ն է զբաղվում գյուղատնտեսությամբ, 15%-ը աշխատում է համայնքում գործող հիմնարկ ձեռնարկություններում, 25%-ը աշխատում է Երևան քաղաքում և մնացած աշխատուժը մեկնում է արտագնա աշխատանքի կամ աշխատանք է փնտրում:

2.2 Համայնքում իրականացվող ծրագրեր

2014թ. համայնքի միջոցներով ամբողջ համայնքի փողոցներում անցկացվել է լուսավորություն: նորակառույց թաղամասերում՝ 11-16-րդ փողոցներում կատարվել է էլեկտրականության անցկացման աշխատանքներ, տեղադրվել է մեկ էլեկտրաենթակայան, հոսանքի սյուներ: Համայնքում կան մի շարք փողոցներ որում խիստ անհրաժեշտ է անցկացնել էլեկտրահաղորդման գծեր, որի համար համայնքապետարանը դիմել է <<Հայէլցանցեր>>ՓԲԸ-ին: Մեծ է նաև ինքնաշեն կառուցված և շահագործման առումով վտանգ ներկայացնող էլեկտրագծերի առկայությունը:Նորակերտ համայնքում ,,Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ–Հայաստան,, գրասենյակի կողմից ֆինանսավորվող ,,Ջրից դեպի շուկա,, ծրագրի շրջանակներում իրականացվել է ,,Ոռոգման ջրի ներտնտեսային կառավարում,, թեմայով եռօրյա դասընթացներ: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի շուրջ 75 ընտանիքներ ծանոթացան ժամանակակից

գյուղատնտեսական նորամուծություններին, բերվեցին աշխարհի առաջադեմ երկրների փորձը, ծանոթացրեցին թունաքիմիկատների ազդեցության և նրանց ճիշտ օգտագործման դրույթներին, տրվեց համապատասխան սերտիֆիկատներ: Արդյունքում դասընթացների մասնակիցները ձեռք բերեցին նոր գիտելիքներ, փոխվեցին մոտեցումները գյուղատնտեսական աշխատանքների և մշակությունների նկատմամբ :

2006թ համայնքում բնակչության բուժսպասարկման աշխատանքները բարելավելու նպատակով, մշակույթի տան շենքի մի հատվածը բուժ- ամբուլատորիային տրամադրվեց, ապա հիմնանորոգվեց Համաշխարհային բանկի հատկացրած միջոցներով և համայնքապետարանի 10% համաֆինանսավորումով: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի բնակիչների բուժ սպասարկման աշխատանքները դրվեցին բարձր հիմքերի վրա, բոլոր պրոֆիլակտիկ ստուգումներն ու պատվաստումները կատարվում են բարեկարգ միջավայրում, հիվանդների ընդունելությունը և սպասարկումը կատարվում է բավարար:

Նորակերտ համայնքի տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվում է Ասիական զարգացման բանկի ծրագրի շրջանակներում <<խոպան>> կոչվող տարածքում անցկացնել ոռոգման նոր ինքնահոս ջրագիծ :

Հանրապետական, մարզային ծրագրեր և միջոցառումներ նախատեսված չեն:

Չեն նախատեսված նաև հարևան համայնքների հետ համատեղ գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրերը և միջոցառումներ:

Չեն նախատեսված նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, արտասահմանյան երկրների համայնքների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող (շարունակվող) ծրագրեր և միջոցառումներ:

Չեն նախատեսված նաև տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից իրականացվող ծրագրեր:

Չեն նախատեսված նաև համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող (շարունակվող) ծրագրեր, ներդրումներ և միջոցառումներ:

Պետության կողմից իրականացվող ծրագրերի ներդրումը համայնքի զարգացմանը կխթաներ/ սակայն դեռևս այն նախատեսված չէ/:

Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

2017-2021թթ սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագրով ըստ առանձին բնագավառների նախատեսվող ծրագրերի, միջոցառումների և աշխատանքների համառոտ ամփոփագիր

h/h	Ծրագրի, միջոցառման, աշխատանքի անվանումը		ծավալը	ֆինանսական միջոցների անհրաժեշտ բանակը /հազ.դրամ/	ֆինանսավորման աղբյուրները			կատարման ժամկետները					պատասխանատու	ծանոթություն
					համայնքի բյուջե	դոնոր կազմակ	այլ/պետ բյուջե և այլ/	2017թ. ծավալը ֆին.միջոց	2018թ. ծավալը ֆին.միջոց	2019թ. ծավալը ֆին. միջոց	2020թ. ծավալը ֆին. միջոց	2021թ. ծավալը ֆին.միջոց		
1.	Համայնքի կենտրոնական փողոցների և նոր թաղամասի գիշերային լուսավորության անցկացում/մ/		800	2000	2000	-	-	400	400	400	400	400	համայնքի ղեկավար	

2.	Ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգում՝փոսալցում /քառ.մ/		2000	3000	3000	-	-	600	600	600	600	600	համայնքի վարչակազմ	
3.	Ասֆալտապատում /քառ. մ/		1000	5 000	5 000	-	-	1 000	1 000	1 000	1 000	1 000	համայնքի վարչակազմ	
4.	Համայնում կանգառների պատրաստում /հատ/		1	500	500	-	-	---	---	500	-	-	համայնքի վարչակազմ	
5.	Ֆուտբոլի դաշտի վերանորոգում /ք.մ/		1	500	500			---	----	----	500	-----	համայնքի վարչակազմ	
6.	Դպրոցի մարզադահլիճի կառուցում		1	150000	------			-----	------	150000	-----	-----	համայնքի վարչակազմ	
7.	Ներհամայնքային ոռոգման ջրատարերի նորոգում /գծմ/		2000	2000	---			400.0	400.	400.	400.	400	համայնքի վարչակազմ	
8.	Նորաստեղծ թաղամասի գազաֆիկացում		1	500	500			---	----	-----	500	----	համայնքի վարչակազմ	

Ծանոթություն. Դպրոցի սպորտ դահլիճի կառուցումը կապված է մեծ ծախսերի հետ, որը համայնքը ի զորու չէ իր միջոցներով իրականացնելու, ուստի անհրաժեշտ է այն ընդգրկել որևե ներդրումային ծրագրում:

2.5.Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ

Նորակերտ համայնքի սոցիալ–տնտեսական զարգացման համար խոչնդոտները և առնվազն դժվարությունները կարող են առաջանալ ներքոհիշյալ խնդիրներից.

Համայնքում առկա քար մշակող ԱՁ <<Բագրատ Ասատրյան>> ունի արտադրական բոլոր հնարավորությունները արտադրելու բազալտե սալիկներ, սակայն իրացման շուկայի բացակայության պատճառով դադարեցել է գործունեությունը, կամ աշխատում է հնարավորությունների չնչին չափով: Համայնքում առկա է գյուղատնտեսական նշանակության տասնյակ հեկտարներով վարելահողեր, որոնք չեն մշակվում հողերի ցածր բերրիության, ոռոգման ջրի բարձր արժեքի և անկանոն մատակարարման, ինչպես նաև աճեցված բերքի իրացման դժվարությունների հետ: Վերը նշված խնդիրների կարգավորման դեպքում հողերը կմշակվեին և համայնքում կբացվեր նոր աշխատետեղեր՝ կբարելավվել համայնքի բնակիչների սոցիալական վիճակը:

Համայնքի միջնակարգ դպրոցը չունի մարզադահլիճ, այդ իսկ պատճառով հատկապես անբարենպաստ եղանակային պայմանների առկայության դեպքում ծախողվում է նորմալ ֆիզ. դաստիարակության պարապմունքների անցկացումը: Համայնքի մշակույթի տան

հիմնանորոգումը հնարավորություն կտա այսուհետ կազմակերպել սպորտին, մշակույթին վերաբերվող միջոցառումներ լիակատար և որակով /նաև ծմռան ամիսներին/: Ցանկալի է նաև ունենալ վոլեյբոլի դաշտ, բարեկարգել վերանորոգել եղած ֆուտբոլի դաշտը, համայնքում երիտասարդության շրջանում ակտիվ մշակութային և մարզական կյանքը, լիարժեք մասայականացնելու նպատակով:

Համայնքում նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման համար խոչնդոտներ են հանդիսանում դպրոցում, մշակույթի տանը և համայնքապետարանում եղած սակավ ֆինանսական միջոցները, որոնց առկայության դեպքում կբացվեր խմբակներ, դասընթացներ, կկազմակերպվեր զբոսանքներ դեպի հանրապետության տեսարժան վայրեր, բնության գիրկ, մատաղ սերնդին դեռահասներին ու պատանիներին կծանոթացնեին հայրենի բնությանը, գեղատեսիլ վայրերին:Այնուամենայնիվ վերջին տարիներին համայնքապետարանի աջակցությամբ տրանսպորտ է տրամադրվել գրեթե բոլոր դասարանների աշակերտներին,այցելելու մեր երկրի տարբեր տեսարժան վայրեր և մշակույթի օջախներ:

Համայնքում բնակչության սոցիալական պաշտպանություն գործընթացը ավելի նպատակային կազմակերպելու համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցներ, որոնք կուղղվեն բնակչության բարեկեցության ապահովության համար համայնքի ընտանիքներում յուրաքանչյուր ծնվածների, մահացածների, հիվանդությունների դեպքում կցուցաբերվեր դրամական օգնություն: Հենաշարժական խնդիրներ ունեցող բնակիչներին համապատասխան սայլակներով և սարքավորումներով ապահովելու համար ունենալ միջոցներ: Համայնքում ուսումնական հաստատությունների, խանութների, բուժ ամբուլատորիայի, մշակույթի տան, հասարակական օբյեկտների մուտքերը հարմարեցնել /մի մասը արդեն հարմարեցված են/ հաշմանդամության սայլակներին համապատասխան: Նման միջոցառումները կնպաստեն հաշմանդամների մասնակցությանը հասարակական կյանքում:

Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման համար անհրաժեշտ է խրախուսել և ակտիվացնել սպորտային խմբակների գործունեությունը: Համայնքում բնակարանային շինարարության խթանման նպատակով համայնքի բնակիչները, ովքեր ունեն տնամերձ հողամասեր, ցանկանում են կառուցել բնակելի տներ, փաստաթղթերի ստացմումը, որը վերաբերվում է թույտվություններին դարձնել էլ ավելի դյուրին և հասանելի: Բնակչության ֆինանսական հնարավորությունների ավելացումը աշխատանքով ապահովված լինելու դեպքում:

Համայնքում անհրաժեշտություն է կանաչ տարածքների ընդարձակումը, աղբահանության հաճախակիացումը, համանքային գերեզմանատների պահպանումը ցանկապատումը, բարեկարգումը, կանաչապատումը, որոնց համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցներ: Համայնքում 2016թ. զգալի աշխատանքներ են կատարվել կանաչ տարածքների ընդարձակման ուղղությամբ:

Համայնքի նորակառույց թաղամասի գազաֆիկացման աշխատանքերի ավարտին հասցնելը:

Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, ճանապարհների ենթակառույցների կառուցումը և պահապանումը:

Համայնքում պետության պաշտպանության իրականացումը, աղետների ռիսկերի նվազեցումը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությունը ու քաղաքացիական պաշտպանությունը իրականացնելու, կազմակերպելու համար անհրաժեշտ է տեխնիա և տրանսպորտային միջոցներ:

Ոռոգման ջրատարի ներհամայնքային համակարգի մի մասը բետոնյա կիսախողովակներ են, մյուս մասը հողային հունով առուներ, որի պատճառով ունենում ենք ջրի կորուստ, հետևապես ստացվում է մշակաբույսերի անարդյունավետ աճեցում, բերքատվության կորուստ:

Համայնքում շրջակա միջավայրի պահպանության համար պակասում են մանկապարտեզում և դպրոցում կազմակերպվող զրույց զեկուցումները, դասընթացները, որն էլ ավելի կխթաներ բնակչության ինքնագիտակցմանը՝ շրջակա միջավայրի նկատմամբ անհատի վերաբերմունքին:

Համայնքում բնակչության ծնելիության և բազմազավակության խթանման համար անհրաժեշտ է ստեղծել բնակ կենցաղային, սոցիալ տնտեսական համալիր պայմաններ: Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացման, արդյունավետ ու մատչելի բժշկական սպասարկման պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է լրացուցիչ ֆինանսական մասհանումներ:

Համայնքում յուրաքանչյուրի համամարդկային արժեքների ազատ և անկաշկանդ հաղորդակցման համար անհրաժեշտ է մշակութային միջոցառումների քանակական և որակական ավելացումը՝ ֆինանսական հնարավորության դեպքում:

Համայնքում չի իրագործվում բարեգործություն, որը կխթաներ համայնքում մշակութային, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման և ֆինանսական անկախության գործում:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմերը

1. Համայնքի աշխարհագրական դիրքը/բնակլիմայական պայմանները/:
2. Երևան քաղաքին մոտ լինելով աշխատուժի որոշակի զբաղվածությունը:
3. Համայնքապետարանի, մշակույթի տան, մանկապարտեզի, բուժ-ամբուլատորիայի շենքերի և աշխատանքների բարվոք վիճակը:
4. Համայնքում գազի, էլեկտրականության, խմելու և ոռոգման ջրերի բավարար մատակարարումը:
5. Համայնքի գլխավոր հատակագծի առկայությունը:

Համայնքի թույլ կողմերը

1. Համայնքի գյուղ նշանակության հողերի ցածր բերրիությունը, որշակի հողակտորների անմշակ լինելը:
2. Սոցիալապես անապահով ընտանիքների ֆինանսական իրավիճակը /ովքեր ընդգրկված են ,,Փարոս,, համակարգում/:
3. Համայնքի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի բացակայությունը:
4. Համայնքի ոռոգման առուներում բետոնյա կիսախողովակներ տեղադրելու անհրաժեշտությունը
5. Համայնքում կանաչ գոտիների սակավությունը:
6. Երիտասարդական ծրագրերի իրականացման ակտիվության ցածր աստիճանը:
7. Աշխատատեղերի բացակայությունը:

Հնարավորությունները

1. Ջերմոցային տնտեսության զարգացում
2. Խաղողագործության և պտղաբուծության զարգացում
3. Բուսաբուծական և անասնաբուծական մթերքների վերամշակման արտադրամասերի ստեղծում:
4. Քարի վերամշակման արտադրամասերի ընդարձակում:

Սպառնալիքները

1. Հողի հարկի և գույքահարկի գանձումների դժվարություններ, որը կապված է համայնքից երկարատև ժամանակով բացակայողների և համայնքի բնակիչների անվճարունակության հետ:

2. Դպրոցի մարզադահլիճի բացակայություն
3. Ոռոգման ներտնտեսային ցանցի անբարեկարգ վիճակ:

3.Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1Համայնքի զարգացման տեսլականը

Նորակերտ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում նախատեսված աշխատանքերի իրականացման արդյունքում՝ համայնքում անհատ ներդրողների հետ համագործակցության արդյունքում կստեղծվեն մի քանի տասնյակ աշխատատեղեր:Հեռանկարային կտրվածքով համայնքի զարգացումը պետք է ընթանա մասնագիտացված խոշոր խաղողագործական և պտղաբուծական կոպերատիվների և նրանց արտադրած հումքը վերամշակող ձեռնարկությունների ստեղծմամբ, որի համար անհրաժեշտ են առաջին հերթին բարենպաստ տնտեսական դաշտ՝ որի առաջնահերթություններն են

1. Ֆինանսական պայմաններ՝ցածր տոկոսադրույքներով վարկեր և այլն
2. Արտադրական համապատասխան ենթակառուցվածքների առկայություն
3. Արտադրանքի իրացման բարենպաստ պայմանների ստեղծման համար պետական հոգածություն և երաշխավորություն:

Նոր թաղամասերի կենտրոնական փողոցների և գիշերային լուսավորության անցկացման, ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգման՝ փոսալցման, ասֆալտապատման, կանգառների պատրաստման ու տեղադրման, նոր թաղամասերի գազիֆիկացման, խմելու ջրի ներքին ցանցի մասնակի նորոգման, ֆուտբոլի դաշտի մասնակի նորոգման, ներհամայնքային հողային հունով ոռոգման ջրատարի նորոգման համար համայնքի բյուջեից կծախսվի 13.5 մլն դրամ: Ցուցանիշների արժեքները սահմանվել են տարեկան կտրվացքով:

Համայնքի զարգացման հնգամյա զարգացման իրականացմամբ ակնկալվում է համայնքի բնակիչների իրական եկամուտների 8%-ի աճ, իսկ ոռոգման համակարգի վերակառուցման դեպքում գյուղատնտեսության արդյունավետությունը կբարձրանա 25%-ով:

Աղքատության շեմից ցածր գտնվող տնտեսությունների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի նկատմամբ՝ 12% :

Համայնքի սեփական եկամուտների աճը՝ 19.4 %:

Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը /չպայմանավորված բնական աճով/ նախորդ տարվա համեմատ՝ 1%:

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակ

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐԹԻՎ 1

« Փողոցների գիշերային լուսավորության անցկացում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գիշերային լուսավորության անցկացում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	400 000	400 000	400 000	400 000	400 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			150 000	150 000	150 000	150 000	150 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			250 000	250 000	250 000	250 000	250 000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Սյուների, լամպերի ձեռք բերում						

	1.2. Լարերի,մալուխների ձեռք բերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Մոնտաժման աշխատանքներ 2.2. Անցկացված լուսավորության փորձարկում
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր 750000 Կապիտալ ծախսեր 1250000 Ընդհանուր բյուջեն 2 000 000
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Նյութեր և սարքավորումներ, աշխատուժ
Ծրագրի հիմնական ռիսկերը	Փողոցների գիշերային լուսավորության անցկացում
Ծրագրի հիմնական շահառուները	Հանայնքի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-21թթ
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում նոր թաղամասերի փողոցների գիշերային լուսավորության անցկացման արդյունքում գյուղի փողոցները կլուսավորվեն, կակտիվանա, կհեշտանա բնակչության տեղաշարժը գիշերային ժամերին, գույքի պահպանությունը կբարելավվի, կբարձրանա բնակչության տրամադրությունը:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 2

« Ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգման՝ փոսալցման »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ճանապահների և փողոցների բարեկարգում, փոսալցում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	600 000	600 000	600 000	600 000	600 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			200 000	200 000	200 000	200 000	200 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			400 000	400 000	400 000	400 000	400 000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ձյութի, մանրախճի,ավազի ձեռք բերում 1.2. Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ասֆալտի փռում 2.2 Ասֆալտի հարդարում ,ամրացում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր 1 000 000 Կապիտալ ծախսեր 2 000 000 Ընդհանուր բյուջեն 3 000 000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ճանապահների և փողոցների բարեկարգում						
Ծրագրի հիմնական շահառուները	Հանայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-21թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգման՝ փոսալցման, ասֆալտապատման աշխատանքների ավարտից հետո կբարելավվի բնակչության նպատակների իրագործում, նախադպրոցականների, դպրոցականների հաճախումները, դպրոց, մանկապարտեզ կհեշտանա: Ավտոմեքենաների օգտագործումը արդյունավետ կլինի, բնակչության աշխատանքի, հանգստի, կուլտուր կենցաղային հարցերի կարգավորման համար բավարար վիճակ կստեղծվի :						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 3

« Ասֆալտապատում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Նորակառույց թաղամասերում փողոցների ասֆալտապատում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	10 00 000	10 00 000	10 00 000	10 00 000	10 00 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			400 000	400 000	400 000	400 000	400 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			600 000	600 000	600 000	600 000	600 000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ջյութի, մանրախճի,ավազի ձեռք բերում 1.2. Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ասֆալտի փռում 2.2 Ասֆալտի հարդարում ,ամրացում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր 2 000 000 Կապիտալ ծախսեր 3 000 000 Ընդհանուր բյուջեն 5 000 000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Նորակառույց թաղամասերում փողոցների ասֆալտապատում						
Ծրագրի հիմնական շահառուները	Հանայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-21թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային ճանապահների և փողոցների փոսալցման , ասֆալտապատման աշխատանքների ավարտից հետո կբարելավվի բնակչության նպատակների իրագործում, նախադպրոցականների, դպրոցականների հաճախումները, դպրոց, մանկապարտեզ կհեշտանա: Ավտոմեքենաների օգտագործումը արդյունավետ կլինի, բնակչության աշխատանքի, հանգստի, կուլտուր կենցաղային հարցերի կարգավորման համար բավարար վիճակ կստեղծվի :						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 4

« Կանգառների պատրաստում, տեղադրում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Կանգառների պատրաստում, տեղադրում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-			500 000		
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
					200 000		
	4.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
					300 000		
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Խողովակների ձեռք բերում 1.2. Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. քարի ձեռք բերում 2.2 թիթեղների ձեռք բերում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր 200 000						

	Կապիտալ ծախսեր 300 000 Ընդհանուր բյուջեն 500 000
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա
Ծրագրի հիմնական ռիսկերը	Կանգառների պատրաստում ու տեղադրում
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-21թթ
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում կանգառների պատրաստման ու տեղադրման արդյունքում հասարակական տրանսպորտին սպասելու ընթացքում, բնակչության բոլոր շերտերը՝ այդ թվում նաև հաշմանդամները կանգառներում կարող են պաշտպանվել արևից, անձրևից և մասամբ էլ ցրտից, կարող են տեղեկատվություն ստանալ երթևեկության ժամերի մասին:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 5

« Գազաֆիկացում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի նոր թաղամասերի 4-րդ փողոցի գազիֆիկացում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-				500 000	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
						200 000	200 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
						300 000	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ձյութի, մանրախճի,ավազի ձեռք բերում 1.2. Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ասֆալտի փռում 2.2 Ասֆալտի հարդարում ,ամրացում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր 200 000 Կապիտալ ծախսեր 300 000 Ընդհանուր բյուջեն 500 000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Համայնքի նոր թաղամասեր գազիֆիկացում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-21թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի նոր թաղամասերի 4-րդ փողոցի գազիֆիկացման արդյունքում նորաստեղծ թաղամասում նորակառույց անհատական տները կգազաֆիկացվեն, նորմալ հունով կգնա տների լոկալ ջեռուցման անցկացման հարցերը, կբարելավվի կենցաղային պայմանները, կբարձրանա բնակչության կենցաղային հարցերի կարգավորման նկատմամբ բավարարվածությունը և տրամադրությունը:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 6

« Դպրոցի մարզադահլիճի կառուցում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Դպրոցի մարզադահլիճի կառուցում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-			1500 00000		
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						

	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
					150000000		
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Ներդրումային ծրագրի առկայություն 1.2. Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրում 2-րԿապիտալ շինարարություն 2.1. Կ 2.2 Խողովակների մոնտաժում, փոսալցում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր Կապիտալ ծախսեր՝150000000 Ընդհանուր բյուջեն՝150000000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Դպրոցի մարզադահլիճի կառուցում						
Ծրագրի հիմնական շահառուները	Հանայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-21թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Դպրոցի մարզադահլիճի կառուցման արդյունքում բարձր հիմքերի վրա կդրվի ֆիզդաստիարակության պարապմունքների անցկացումը						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 7

« Ֆուտբոլի դաշտի նորոգում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ֆուտբոլի դաշտի նորոգում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-				500 000	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
						300 000	
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
						200 000	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1. Ավազի ծեռք բերում 1.2. Փոսալցում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Տեխնիկայի վարձակալում 2.2 Կանաչապատում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝300000 Կապիտալ ծախսեր՝200000 Ընդհանուր բյուջեն՝500 000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆուտբոլի դաշտի մասնակի նորոգում						
Ծրագրի հիմնական շահառուները	Հանայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-21թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում ֆուտբոլի դաշտի մասնակի նորոգամբ կնպաստի ֆիզիկական կուլտուրայի զարգացմանը, հատկապես ,,ֆուտբոլ,, սպորտաձևի ուղղությամբ, առողջ ապրելակերպի խրախուսման համար նպատակահարմար է բնակչության շրջանում ակտիվացնել կազմակերպել հավաքներ, մրցույթներ, պարապմունքներ:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 8

« Ոռոգման ջրատարի նորոգման »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ոռոգման ջրատարի նորոգման						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	400 000	400 000	400 000	400 000	400 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
		Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				

	Ցուցանիշներ	2016	2017	2018	2019	2020	2021
			200 000	200 000	200 000	200 000	200 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			200 000	200 000	200 000	200 000	200 000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1. Տեխնիկայի վարձակալում 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Տեխնիկայի վարձակալում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր 1000000 Կապիտալ ծախսեր 1 000 000 Ընդհանուր բյուջեն 2000000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ոռոգման ջրատարի նորոգման						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-21թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային հողային հունով ոռոգման ջրատարի նորոգման արդյունքում ոռոգման համակարգի վերակառուցման դեպքում գյուղատնտեսության արդյունավետությունը կբարձրանա, մշակաբույսերի բերքատվության աճի հաշվին:						

3. ՀՀԶԾ ֆինանսավորում

Համայնքի տարեկան ընդհանուր բյուջեն 66210.0 հազ. ՀՀ դրամ է ընդհանուր եկամուտների մեջ սեփական եկամուտներ 12864.2 հազար ՀՀ դրամ կամ 19.4 տոկոս:

Համայնքում կոնկրետ ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Արմավիրի մարզի Նորակերտ համայնքում ունի հետևյալ պատկերը.

h/h	եկամուտների տեսակը	2016 փաստացի	2017 նախատեսված	2018 նախատեսված	2019 նախատեսված	2020 նախատեսված	2021 նախատեսված
1.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	67149.0	66210.0	66500.0	67028.0	67400.0	68110.0
Ա	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	13726.0	12864.2	13000.0	13228.0	13400.0	13610.0
Ա.1	ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	-	-				
1.	ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	12480.6	11490.0	11600.0	11800.0	11950.0	12100.0
1.1	Հողի հարկ	4123.0	3680.0	3700.0	3800.0	3850.0	3900.0
1.2	Գույքահարկ	8357.6	7810.0	7900.0	8000.0	8100.0	8200.0
1.3	Եկամտահարկ	-	-	-	-	-	-
1.4	Այլ հարկ.եկամուտներ	-	-	-	-	-	-
2	ՏՈՒՐՔԵՐ	588.1	417.0	425.0	430.0	440.0	450.0
2.1	Պետական տուրքեր	-	-	-	-	-	-
2.2	Տեղական տուրքեր	588.1	417.0	425.0	430.0	440.0	450.0
3	ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	657.3	957.2	975.0	998.0	1010.0	1060.0
3.1	Համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վճարներ	44.8	43.2	45.0	48.0	50.0	50.0
3.2	Գույքի վարձակալությունից եկամուտներ	---	----	----	---	---	-----
3.3	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ կողմից վարչական պատասխանատվության մջոցների կիրառումից եկամուտներ	-	10.0	10.0	10.0	10.0	10.0
3.4	Տեղական վճարներ	-----	904.0	920.0	940.0	950.0	1000.0
3.5	Այլ ոչ հարկային եկամուտներ	6125.5	---	----	-----	-----	------
Ա.2	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԿԱՊԻՏԱԼԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ	-	-	-	-	-	-
Բ	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ /ԴՐԱՄԱՇՆՈՐՀ/	53423.0	53345.8	53500.0	53800.0	54000.0	54500.0
Բ.1	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	-	-	-	-	-	-
Բ.2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	-	-	-	-	-	-